## Արձանագրություն N 2-3

### ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/4 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Կաքավաձորի միջնակարգ դպրոցի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան | 18.08.2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ս. Գասպարյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Խաչատրյան |
| | Ս. Իշխանյան |
| | Ա. Եղիազարյան |
| Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ | Գ. Հակոբյան |

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ա. Աչոյան

1. **Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին**

---

(Ս. Գասպարյան)

Ընդունել ի գիտություն՝

1.1 Գնման ընթացակարգի մասնակցի՝ <<ՄՄՆՍ>>, <<ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻՍ ԳՐՈՒՊ>>, <<Հիդրո Քոնսթրաքշն>> ՍՊԸ և <<ՊՐՈՖ ԳԱԶ>> ՍՊԸ-ների կոնսորցիումի (այսուհետ՝ Կոնսորցիում) հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 14.08.2025թ. ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է Կոնսորցիումի կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

2. **Գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների մասին**

---

(Ս. Գասպարյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

| *Հ/Հ* | *Մասնակցի անվանումը* | *Հայտի գնահատականը* | *Ընդհանուր գին /ՀՀ դրամ/* |
|---|---|---|---|
| 1 | <<Բիդեք>> ՍՊԸ | բավարար | 443 400 000 |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | <<ՄՄՆՍ>> ՍՊԸ, <<ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻԶ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ, <<Հիդրո Քոնսթրաքշն>> ՍՊԸ և <<ՊՐՈՖ ԳԱԶ>> ՍՊԸ կոնսորցիում | բավարար | 455 700 000 |

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ ճանաչել հետևյալ կազմակերպություններին.

| *Գնման առարկա* | *Ընտրված մասնակից* | *Այդպիսին չճանաչված մասնակիցներ* |
|---|---|---|
| ՀՀ Արագածոտնի մարզի Կաքավաձորի միջնակարգ դպրոցի նորոգման աշխատանքներ | <<Բիդեք>> ՍՊԸ | <<ՄՄՆՍ>> ՍՊԸ, <<ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻԶ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ, <<Հիդրո Քոնսթրաքշն>> ՍՊԸ և <<ՊՐՈՖ ԳԱԶ>> ՍՊԸ կոնսորցիում |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:*

## 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ս. Գասպարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունած որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Բիդեք ՍՊԸ» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:*

## 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ս. Գասպարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը (կամ չկնքվելու հանգամանքը հայտնի դառնալու օրը) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________________ Ս. Գասպարյան

Անդամ՝ ______________________ Ա. Խաչատրյան

______________________ Ս. Իշխանյան

______________________ Ա. Եղիազարյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ ______________________ Գ. Հակոբյան